ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԳՅՈՒՄՐՈՒ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ» ՊՈԱԿ

Հետազոտական աշխատանք

ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

Թեմա՝ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՀԱՄԱԶԳԵՍՏԸ ԱՐԴԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Առարկա՝ Տեխնոլոգիա

Ուսուցչուհի՝ Ջեմմա Մխոյան

Ղեկավար՝ Արմեն Հայրապետյան

ԳՅՈՒՄՐԻ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ----------3

ԳԼՈՒԽ Ա.
ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՀԱՄԱԶԳԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ----------5

1.1 Աշակերտական համազգեստի պատմությունը XIXդ----------5

1.2 Աշակերտական համազգեստի պատմությունը XXդ. մինչև մեր օրեր----7

ԳԼՈՒԽ Բ.
ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՀԱՄԱԶԳԵՍՏԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ----------9

2.1 Աշակերտական համազգեստ կրելու թերությունները
արդի դպրոցներում ----------9

2.2 Աշակերտական համազգեստ կրելու առավելությունները
արդի դպրոցներում ----------12

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ----------15

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ----------16

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՀԱՐՑԱԹԵՐԹ----------17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

XX դարի շատ երկրներում, այդ թվում նաև Հայաստանում, աշակերտները դպրոց են հաճախում ազատ ոճի հագուստով, որի պատճառով դժվար է տարբերակել աշակերտներին և ուսանողներին:

Աշակերտները հիմնականում համազգեստ են կրում սեպտեմբերին՝ ուսումնական տարվա մեկնարկին և վերջին զանգի ավարտական հանդեսին: Այս առումով, հասարակության անդամները, ովքեր դպրոցի հետ անմիջական առնչություն ունեն սկզբունքորեն բաժանվում են երկու մասի՝ ազատ ոճի և աշակերտական համազգեստի կողմնակիցների: Պետք է նշել, որ մայրաքաղաքում և մարզերում կան որոշ դպրոցներ, որտեղ երեխաները կրում են միանման աշակերտական համազգեստ: Կան դպրոցներ էլ, որտեղ աշակերտների ծնողները հաճախ հանդես են գալիս պարտադիր միանման համազգեստ կրելու առաջարկներով:

Սակայն, քիչ չեն նաև այն դեպքերը, երբ նույն դպրոցում կամ նույն դասարանում սովորող երեխաների ծնողները տարակարծիք են այդ հարցում: Ոմանք նախընտրում են իրենց երեխային դպրոց ուղարկել ազատ ոճի հագուստով, իսկ ոմանց համար էլ ազատ ոճի հագուստ ընտրելը դառնում է ավելորդ հոգս և ծախս: Սակայն, ըստ էության «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը չի պարտադրում աշակերտին որևէ հատուկ հագուստով գնալ դպրոց:

Ներկայումս թեման շատ արդիական է, քանի որ հասարակության մեջ առկա են տարակարծություններ այդ հարցի շուրջ: Այնուամենայնիվ, հատուկ հետազոտություն չի իրականացվել ոլորտում դպրոցական համազգեստի կարևորության վերաբերյալ:

Այսպիսով, սույն հետազոտության **նպատակն** է վեր հանել աշակերտական համազգեստի նշանակությունը ժամանակակից կրթական համակարգում:

Ուսումնասիրության **օբյեկտն** է՝ աշակերտական համազգեստի նշանակությունը, իսկ ուսումնասիրության **առարկան՝** աշակերտական համազգեստի նշանակությունը արդի դպրոցական համակարգում:

Հետազոտության **խնդիրներն** են.

1. Ուսումնասիրել աշակերտների կարծիքը համազգեստի վերաբերյալ։
2. Ուսումնասիրել ուսուցիչների կարծիքը աշակերտական համազգեստի վերաբերյալ։
3. Ուսուցիչների և աշակերտների կարծիքները համադրելով, պարզել աշակերտական համազգեստի դրական նշանակությունը արդի դպրոցական համակարգի համար։
4. Ուսուցիչների և աշակերտների կարծիքները համադրելով պարզել աշակերտական համազգեստի բացասական նշանակությունը արդի դպրոցական համակարգի համար։

Հետազոտության ընթացքում կատարվել է անկետավորում (Տես՝ **հավելված *1***) Գյումրու թիվ 29 հիմնական դպրոցի 5-9 դասարանների աշակերտների և ուսուցիչների հետ։ Դպրոցի ընտրությունը կատարվել է հաշվի առնելով հետազոտողի համար այդ դպրոցի հասանելիությունը՝ ազատ «մուտքը» դպրոց։

ԳԼՈՒԽ 1

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՀԱՄԱԶԳԵՍՏԻՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

1.1 Աշակերտական համազգեստի պատմությունը XIX դարում

Աշակերտական համազգեստի ստեղծման երկու տարբերակ կար: Հայաստանում համազգեստի նախատիպ կարելի է համարել հոգևորականների համազգեստը: Նախկինում կրթություն ստանում էին վանական համալիրներում, որտեղ ուսանողները կրում էին ճիշտ այնպիսի հագուստ, ինչպիսին հոգևորականներինն էր: Հետագայում՝ 1830-ական թվականների կեսերին, Ցարական Ռուսաստանի տիրապետության տակ գտնվելու տարիներին, Հայաստանում բացվեցին թեմական դպրոցներ (հոգևոր ուսումնական հաստատություններ): Այս դպրոցներից որոշներում կար հատուկ դպրոցական համազգեստ: Դրանցից էր Երեւանի թեմական դպրոցը, որտեղ Ս. Բեկնազյանի տեսչության տարիներին (1876թ-ից սկսած) սահմանվեց աշակերտական համազգեստ:

Սա հայաստանյան դպրոցների օրինակն էր: Իսկ, օրինակ, Եվրոպական երկրներից պարտադիր համազգեստ ունեցող դպրոցների թվով ամենամեծը Մեծ Բրիտանիան էր: Այս երկրում դպրոցական համազգեստի նախատիպը համարվում է զինվորական համազգեստը: Առաջին դպրոցը, որն ընդունեց դպրոցական պարտադիր միանման համազգեստ, Լոնդոնի «Քրիստոսի հիվանդանոց» կոչվող դպրոցն էր, որն աղքատ երեխաների համար գործող բարեգործական կրթօջախ էր: Հետագայում այս օրինակին հետևեցին նաև այլ բարեգործական դպրոցներ: Ինչու՞ հենց բարեգործական դպրոցներից սկսվեց համազգեստ կրելու կարևորությունը: Քանի որ դրանք ֆինասավորվում էին բարեգործների եւ եկեղեցականների կողմից, ուստի պետք էր հնարավորինս էժան հագուստ տրամադրել դպրոցականներին: Ի դեպ, «Քրիստոսի հիվանդանոց» դպրոցի համազգեստը կապույտ էր, քանի որ այդ գույնի ներկն ամենաէժանն էր: Սակայն, այս ժամանակահատվածում դպրոցականների շրջանում բարդ իրավիճակ սկսվեց: Քանի որ բարեգործական դպրոցի երեխաները՝ իրենց համազգեստով տարբերվում էին մասնավոր դպրոցում սովորող աշակերտներից,

երևում էին նրանց սոցիալական տարբերությունները: Բացի այդ, XVIII-XIX դդ. Քառասային իրավիճակ սկսվեց նաև մասնավոր դպրոցներում: Այստեղ երեխաներն աչքի էին ընկնում իրենց անկարգ ու ծույլ պահվածքով: Ուստի Անգլիայի թագավոր Հենրիխ 8-ի օրոք (XIX դարի սկիզբ) դպրոցական համազգեստ ընդունվեց Անգլիայի բոլոր դպրոցներում: Եթե բարեգործականների համար համազգեստը նախեւառաջ գումար տնտեսելու միջոց էր, ապա մասնավոր դպրոցների դեպքում այն նախատեսված էր անկարգ երեխաներին ուսուցչին ենթարկելու համար: Սկզբնական շրջանում համազգեստը դպրոցականի համար կարգապահության խորհրդանիշ էր հանդիսանում: Ավելի ուշ, մասնավոր ուսումնական հաստատությունների համար այն դարձավ յուրահատկության դրսևորում: Յուրաքանչյուր դպրոց ունեցավ իր համազգեստը, որը տարբերվում է մյուս կրթօջախների հանդերձանքից:

Օրինակ Ռուսաստանում աշակերտական համազգեստի ստեղծման տարեթիվ է համարվում 1834 թվականը: Ցարական Ռուսաստանում բոլոր պետական հաստատություններում կրում էին համազգեստ իրենց պաշտոնին համապատասխան: Պետական ուսումնական հաստատությունները նույնպես բացառություն չէին: Ուսուցիչները որպես համազգեստ կրում էին երկփեղկ բաճկոններ: Բոլոր կրթական հաստատություններում համազգեստը ռազմական ոճի էր՝ գլխարկ, բաճկոն և վերարկու, որոնք տարբերվում էին միայն գույնով,, կոճակներով և տարբերանշաններով: Գիմնազիաների բոլոր աշակերտները ուսապարկ էին կրում: Գիմնազիաներում սովորում էին միայն ազնվականների, մտավորականների և խոշոր արդյունաբերողների երեխաներ, և, հետևաբար գիմնազիայի սաների համազգեստը բնորոշում էր նրացն սոցիալական վիճակը: Համազգեստը կրում էին ոչ միայն գիմնազիաներում , այլև փողոցում, տանը, տոնակատարություններին:

Աղջիկների դպրոցական համազգեստը ներդրվել է 1896 թվականին: Այն ժամանակաղջիկներն ունեին երեք տեսակի համազգեստ՝

- Պարտադիր համազգեստ, որը բաղկացած էր բրդյա զգեստից և սևգոգնոցից,
- տոնական մոդել՝ նույն զգեստից, սպիտակ գոգնոցից և նրբագեղ ժանյակե օձիքից,
- ցանկացած մոդելի և կտրվածքի առանձին զգեստ, եթե ծնողների միջոցներըթույլ էին տալիս նման շքեղություն:

Յուրաքանչյուր ուսումնական հաստատություն ուներ տարբեր գույնի համազգեստ: Կրտսեր դպրոցականների համար այն մուգ կապույտ էր, 12-14 տարեկանների համար՝ երկնագույն, շրջանավարտների համար՝ դարչնագույն:

1.2 Աշակերտական համազգեստի պատմությունը XX րդ դարից մինչև մեր օրեր

1918 թվականին Ռուսաստանում ընդունվել էր որոշում, որի համաձայն չեղարկվում էր համազգեստ կրելու վերաբերյալ օրենքը: Պատճառն այն էր, որ շատ ծնողներ չէին կարող իրենց երեխաների համար հատուկ հագուստ գնել: Հետեւաբար, երեխաները դպրոց էին գնում ազատ ոճի հագուստով: Հայրենական մեծ պատերազմից հետո (1949) դպրոցական համազգեստ կրելը դառնում է պարտադիր: Սովորական օրերին աղջիկներից պահանջվում էր հագնել շագանակագույն բրդյա զգեստներ՝ սև գոգնոցով, նրանք պետք է կրեին սև կամ շագանակագույն ժապավեններ, իսկ տոնական օրերին սպիտակ գոգնոց և սպիտակ զուգագուլպաներ: Տղաները կրում էին զինվորական կոստյումներ՝ կանգնած օձիքով: Հետպատերազմյան շրջանում սովորողների համար կար կարևոր ընդունված խորհրդանիշ: Պիոներները կարմիր փողկապ էին կրում, իսկ հոկտեմբերիկները և կոմերիտականները՝ կրծքանշան:

Աշակերտական համազգեստը 1962-1984 թվականներին մի քանի անգամ փոփոխության է ենթարկվել: Օրինակ 1975 թ.-ին փոխվեց տղաների համազգեստը՝ տաբատ և բաճկոններ, պատրաստված կապույտ կիսաբրդյա կտորից: Բաճկոնների կտրվածքը հիշեցնում էր դասական ջինսե բաճկոններ՝ ուսադիրներով և կրծքավանդակի գրպաններով: Բաճկոնը կոճկվում էր ալյումինե կոճակներով: Թևի կողքին փափուկ պլաստիկից պատրաստված զինանշան էր՝ բացված դասագրքով և ծագող արևով՝ լուսավորության խորհրդանիշ:

Իսկ 1984 թվականին փոփոխվեցին աղջիկների աշակերտական համազգեստը: Կապույտ գույնով ներկայացվեց երեք կտորից բաղկացած կոստյում՝ առջևի ծալքերով տրապիզե կիսաշրջազգեստ, բաճկոն՝ ներքին գրպաններով և ժիլետով: Կիսաշրջազգեստը կարելի էր կրել կամ բաճկոնով, կամ ժիլետով, կամ միանգամիցամբողջ կոստյումը:

1988 թվականին որոշ դպրոցների թույլ տրվեց փորձնական հիմունքներով հրա-

ժարվել պարտադիր դպրոցական համազգեստից: Իսկ 1992-ին ԽՍՀՄ-ի փլուզումից հետո գրեթե բոլոր երկրներում վերացվեց օրենքը պարտադիր աշակերտական համազգեստ կրելու վերաբերյալ:

Հայաստանն էլ, գտնվելով ԽՍՀՄ-ի կազմի մեջ, պահպանում էր աշակերտական համազգեստին վերաբերող կանոնները և աշակերտները կրում էին վերը նկարագրված համզգեստներ:

Այն երկրները, որտեղ դպրոցական համազգեստը ավելի հայտնի է, քան Մեծ Բրիտանիայում, Ճապոնիան և Կորեան է: Համազգեստը ճապոնական դպրոցներում հայտնվել է XIX դարի վերջին և այժմ գոյություն ունի մասնավոր և պետական դպրոցների մեծ մասում: Օրինակ ճապոնական աշակերտական համզագեստը համարվում է նորաձևության էտալոն աշխարհի մի շարք դեռահասների համար: Ճապոնիայում յուրաքանչյուր դպրոց ունի իր սեփականը, բայց իրականում այդքան էլ շատ տարբերակներ չկան: Սովորաբար տղաներինը՝ սպիտակ վերնաշապիկը, սև տաբատը և բաճկոնն է: Իսկ աղջիկներինը կրկին սպիտակ վերնաշապիկ և բաճկոն, ինչպես նաև ծովահեն Ֆուչոի «Նավաստի կոստյում» անունով կիսաշրջազգեստը:

Եվրոպական որոշ երկրներում աշակերտական համազգեստը երկար պատմություն չունեցավ: Օրինակ, Ֆրանսիայում կրթական հաստատություններում համազգեստը գոյություն ուներ միայն 1927-1968 թվականներին, Լեհաստանում՝ մինչև 1988 թվականը, իսկ եվրոպական երկրներիմեծ մասում ամեն ինչ դեռ սահմանափակված է բավականին խիստ ոճով:

ԳԼՈՒԽ 2

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՀԱՄԱԶԳԵՍՏԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

2.1 Աշակերտական համազգեստ կրելու թերությունները արդի դպրոցներում

Կյանքում ամեն ինչ ունի իր առավելությունները և թերությունները, լինի դա որոշում, քայլ կամ մեկ այլ բան: Կարելի է ասել, որ աշակերտական համազգեստ կրելը նույնպես բացառություն չէ: Դրանք պարզելու համար անցկացվել է հետազոտություն Գյումրու թիվ 29 դպրոցի օրինակով: Պատահականության սկզբունքով ընտրվել են 20 ուսուցիչներ 25-63 տարեկան իգական սեռի /ընտրությունը պայմանավորված է դպրոցում արական սեռի ուսուցիչների բացակայությամբ/ և 5-9 դասարանների, 20 աշակերտներ, յուրաքանչյուր օղակից 2 արական և 2 իգական սեռի ներկայացուցիչ: Կատարվել է անկետավորում նախապես կազմված հարցաթերթով: (Տես՝ հավելված 1):



Առաջին հերթին հետաքրքիր է հասկանալ, թե ինչքանով են բավարարված ուսուցիչները և աշակերտները այն հագուստից, որով ներկայումս աշակերտները հաճախում են դպրոց: Տվյալների վերլուծությունը ցույց տվեց, որ ուսուցիչների 30%-ին լիովին բավարարում է, մինչդեռ աշակերտների միայն 60%-ին է բավարարում իրենց հագուստը:

Այդ իսկ պատճառով տվյալ դպրոցի հարցված աշակերտների 80%-ը դեմ է

դպրոցներում աշակերտական համազգեստ կրելուն: Մինչդեռ ուսուցիչների 75% -ը կցանկանա տեսնել աշակերտական համազգեստ դպրոցում:

Այն աշակերտները, ովքեր դեմ են աշակերտական համազգեստ կրելուն, իրենց պատասխանը հիմնավորում են համազգեստի ունեցած թերություններով: Աշակերտական համազգեստի թերություններից խոսելիս առաջին հերթին նշվում է, որ համազգեստը զրկում է աշակերտներին անհատականությունից, սահմանափակում է նրանց արտահայտման ազատությունը, ճաշակի զարգացումը: Ինչպես օրինակ նշել էր հարցվող աշակերտներից մեկը, ում կարծիքը, կարելի է ասել, ընդհանրացրել է մնացյալ աշակերտների կարծիքը. «Աշակերտական համազգեստի դերը կարգապահական տեսանկյունից առաջին հերթին կայանում է նրանում, որ այն փորձում է անհատականությունը փոխարինել ստանդարտացումով և երբեմն պարզապես անհրապույր արտաքինով»:

Օրինակ, իմ կողմից ուսումնասիրված նյութերից մեկում՝ որում ներկայացված էր աշակերտական համազգեստի պատմությունը, նման կերպ էր նկարագրվում աշակերտական համազգեստի նշանակությունը: Աշակերտական համազգեստը հիմնականում նախատեսված է «հնազանդ մարմին» ստեղծելու համար, որը Քրեյքը բնութագրում է որպես «սովորող, ենթարկվող և հեշտությամբ կառավարվող»: Հնազանդ մարմնի հայեցակարգը ներկայացվել է Ֆուկոյի կողմից «Կարգապահություն և պատժում»: Չնայած աշխատությունում նրա հետազոտությունը սահմանափակվում է բանտային հսկողության համակարգով, այն նաև առնչվում է այլ ռեպրեսիվ համակարգերին, որոնցից մեկը դպրոցն է: Ֆուկոն պնդում է, որ «հնազանդ մարմիններ» ստեղծելը պահանջում է մշտական արտաքին վերահսկողության և վերահսկողության համակարգ, որը վերահսկում է մարդու արտաքին և ներքին կարգապահությունը: Մյուս կողմից, դպրոցական համազգեստը լրացուցիչ ծախս է:

Երեխաները համարում են, որ դրանք այդքան էլ հարմարավետ հագուստ չէ, հատկապես, եթե երեխան սիրում է դասերից հետո գնալ ընկերների հետ զբոսնելու: Ազատ ոճի համազգեստը աշակերտի համար ինքնադրսևորման հսկայական հնարավորություն է, ինչ-որ առումով՝ միջոց գտնել ընկերների, ովքեր կունենան նույն ճաշակն ու հետաքրքրությունները: Նույնիսկ երիտասարդ ուսուցչուհիներից մեկը նշել է. «Համարում եմ, որ երեխային այն տարիքում, երբ նոր է ձեւավորվում ճաշակը,

պարտադրել հագնել հատուկ հագուստ՝ սխալ է»:



Ըստ այդմ, հարցվողների 65%-ը համարում է, որ համազգեստը աշակերտներին միօրինակ է դարձնում: Ընդ որում աշակերտների 85 %-ը, համաձայն են պնդման հետ, իսկ ուսուցիչների՝ 45%-ը:

Արդի դպրոցի աշակերտները, իրենց վերաբերվող նմանատիպ որոշումները, իրենց կրած հագուստների վերաբերյալ, համարում են բռնություն սեփական անձի դեմ: Մինչդեռ Խորհրդային Միության տարիներին բոլորս կրում էինք համազգեստ և շատերը կփաստեն, որ ավելի լավ էինք սովորում, ավելի կարգապահ էինք և չէինք ընկալում դա որպես բռնություն: Ես կարծում եմ, որ դա ուղղակի ընկալման և մատուցման խնդիր է : Եթե մենք աշակերտներին բացատրենք, ցույց տանք համազգեստ կրելու կարևորությունը, թեկուզ սեփական օրինակով, ինչու չէ նաև արտասահմանյան օրինակով, ապա աշակերտների մոտ նման կարծիք և զգացումներ չեն ձևավորվի:



2.2 Աշակերտական համազգեստ կրելու առավելությունները արդի դպրոցներում

Վերը նշված թերություններից զատ, աշակերտական հագուստ կրելու մեջ կան նաև առավելություններ,որոնց մասին նույնպես խոսել են մեր հետազոտության մասնակիցները: Ուսուցիչները հատկապես առավելություն էին համարում այն, որ համազգեստը աշակերտներին ավելի կարգապահ է դարձնում: «Ելնելով իմ փորձից, կարծում եմ որ համազգեստով աշակերտները ավելի կենտրոնացած, խելոք, հարգալից կլինեն: Ավելի լավ կգիտակցեն իրենց դերը դպրոցում:»

Այսինքն ըստ էության մեր հետազոտության մասնակից ուսուցիչների մեծ մասը համաձայն են այն կարծիքի հետ, որ աշակերտական համազգեստը անձի սոցիալականացման լավագույն միջոց է: Այն պարտադրում է նաև կարգապահություն:

Ուսուցիչների մոտ 55%-ը կարծում է, որ համազգեստը կարող է ապահովել կարգապահություն դպրոցում: Շատերն իրենց սեփական փորձից ելնելով, են արտահայտել հետևյալ կարծիքը և ես նույնպես համաձայն եմ նրանց հետ:

Ահա ևս մի հետազոտության արդյունք, որ կարելի է ասել ապացուցում են մեր հարցվողների դիրքորոշումը:

1994թ, ԱՄՆ-ում առաջին հանրակրթական դպրոցն էր, որը պահանջում էր աշակերտական համազգեստ: Դա Լոնգ Բիչի միացյալ դպրոցական շրջանն էր: 1999 թ.-ին հետազոտողները պարզեցին, որ այդ շրջանի դպրոցներում հանցավոր միջադեպերը նվազել են 86%-ով, գնահատականները բարձրացել են, կարգապահության հետ կապված խնդիրները նվազել:

Հարցվողների կողմից նշված առավելություններից ակնհայտ է դառնում, ուսուցիչների ակնկալիքները համազգեստ կրելուց: Ակնկալվում է, որ համազգեստով երեխան կունենա բարձր ակադեմիական առաջադիմություն, հնազանդություն, ճշտապահություն և նախաձեռնողականություն: Դրական է համարվում համազգեստի և օրինակելի վարքի միջև կապը: Այդ առումով անհրաժեշտ է համարվում կիրառել շատ դպրոցներում:

Ինչպես նշեցինք վերևում, ի հակադրություն ուսուցիչների, աշակերտները նշել էին, որ եթե իրենք սկսեն միանման հագնվել ապա կկորի իրենց անհատականու-

թյունը, չեն կարողանա ինքնարտահայտվել, տարբերվել իրենց ճաշակով: Սակայն այս հարցը կարելի է նաև այլ տեսանկյունից դիտարկել: Չէ որ միայն հագուստը չէ այն միջոցը, որով կարելի է տարբերվել խմբի մնացած անդամներից, մինչդեռ համազգեստի միջոցով հնարավոր է ձևավորել խմբի պատկանելիության զգացում:

Ի պաշտպանություն համազգեստ կրելու կողմնակիցների, պետք է ասել, որ ինչպես ցույց է տալիս ԱՄՆ-ի, Ճապոնիայի, Մեծ Բրիտանիայի եւ Եվրոպական մի շարք երկրների փորձը, ամենևին էլ այդպես չէ: Կրելով աշակերտական համազգեստ՝ աշակերտն իրեն որոշակի խմբի անդամ է զգում, որն ունի իրավունքներ ու պարտականություններ, ինչպես յուրաքանչուր քաղաքացի: Նաավելի պատասխանատու և գիտակից քաղաքացի է դաստիարակվում:

Բացի այդ, անձի ձևավորման համատեքստում հնարավոր են մի շարք դրական փոփոխություններ: Մասնավորապես, տվյալ հագուստով երեխաների մոտ կարող է ձևավորվել նոր ոճ՝ «բիզնես/գործնական»:

Այն ինչ որ տեղ նաև նախատեսված է երեխային պատրաստելու ապագա կյանքի համար՝ սովորեցնելով նրան իր անձի ընդհանրացված ընկալմանը, թիմում աշխատելուն, երբ անհատական ցանկություններն ու շահերը պետք է փոխկապակցված լինեն թիմի շահերի հետ: Աշակերտական համազգեստը նաև նախատեսում է երեխայի գիտակցության մեջ դրական արժեքների ներմուծում:

Անհրաժեշտ է անդրադառնալ ևս մի կարևոր փաստի: Այն, որ աշակերտական համազգեստը վերացնում է սոցիալական տարբերրությունները, դպրոցական համազգեստը նվազագույնի է հասցնում մրցակցությունը և դպրոցականների միջև, ուրիշներից ավելի լավ տեսք ունենալու ցանկությունը, ինչը թույլ չի տալիս երեխաներին բաժանել հարուստների և աղքատների:

Հետաքրքրական է որ առավելությունների մասին խոսելիս աշակերտներից մեկը նշել էր հենց այդ հատկանիշը և իր կարծիքը բացատրել հետևյալ կերպ:

«Երբ բոլորը նույն համազգեստն են հագնում, ավելի նման են իրար: Երբ չկա միանման համազգեստ, ու մեկը բոլորից լավ է հագնվում, ապա մյուսները կաշկանդվում են»: Ըստ իս շատ կարևոր է նաև համազգեստի տեսքը:

Դպրոցներում աշակերտական հագուստի հիմնական նպատակն է նվազագույնի հասցնել արտաքին տեսքին առնչվող բոլոր տեսակի ճոխությունները:

Իսկ ի՞նչ ոճի համազգեստ ավելի հարմար կլինի կրել արդի դպրոցում: Մեր հարցվողների 42,5%-ի կարծիքով ավելի նպատակահարմար է, որ համազգեստը առաջին հերթին լինի ժամանակակից, 35%-ի կարծիքով՝ հարմարավետ և 22,5%-ի համարում են, որ համազգեստը անպայման պետք է լինի գործնական:

Համակարծիք եմ մեր հարցվողների հետ, որ վերը նշված բոլոր ոճերն էլ պետք է իրենց տեղն ունենան աշակերտական համազգեստ ընտրելիս: Սակայն ժամանակակից աշխարհում համազգեստ ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել աշակերտների



կարծիքը, մոդան, ժամանակակից տենդենցները, տարիքը, բնակության վայրը, գույնը և այդ դեպքում հնարավոր կլինի դպրոցներում մտցնելաշակերտական համազգեստ և խուսափել դժգոհություններից: Դպրոցներում ագուստի ընտրության վերաբերյալ հստակ կանոններ սահմանելը անիմաստ կլինի: Բայց վստահ եմ որ համապատասխան ոճային և գունային տիրույթ ընտրելու և համազգեստ ստեղծելու դեպքում կարելի է մի շարք երեխաների ուշադրությունը դպրոցում ավելի շատ կենտրոնացնել հենց և միայն ուսման վրա,այլ ոչ արտաքինի: Այսպիսի երևույթներ ներկայումս շատ կարելի է տեսնել մեր դպրոցներում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մեր հետազոտական աշխատանքում հավաքագրվել են նյութեր աշակերտական համազգեստի պատմությունից: Իմացանք, թե երբ է հայտնվել դպրոցական համազգեստը, որոնք են եղել դրանց ներդրման նպատակները:

Այսպիսով հետազոտության արդյունքում հնարավոր եղավ տվյալ դպրոցի օրինակով վեր հանել համազգեստի նշանակությունը արդի դպրոցում: Հենց աշակերտական համազգեստը կարող է հանդիսանալ հաճախումների, կարգապահության, աշակերտների մոտիվացիայի, սոցիալ-տնտեսական խնդիրների լուծումների շարժիչ ուժ: Չնայած դպրոցական համազգեստը այս բոլոր խնդիրների լուծման համար կարող է միայն մի փոքր մասը լինել: Հարկ է նկատել, որ համազգեստի արդյունավետության վերաբերյալ հետազոտությունները պետք է լինեն շարունակական, քանի որ ժամանակաշրջանից, տարածաշրջանից եվ այլ չափանիշներից կախված, հնարավոր են կարծիքների տարբերություններ, իսկ դրանց բացահայտումը կարող է նորամուծությունների պատճառ դառնալ: Նմանատիպ նորամուծությունների, փոխզիջումների դեպքում հնարավոր կլինի խուսափել համազգեստի հանդեպ աշակերտների բացասական վերաբերմունքից:

Տվյալ հետազոտության ընթացքում հնարավոր եղավ ցույց տալ, որ չնայած համազգեստ կրելը ունի թերություններ, բայց այնուամենայնիվ առավելությունները գերակշռում են: Իմ և հարցվողներից շատերի կարծիքով դպրոցական համազգեստը թե՛ կրթօջախի և թե՛ աշակերտի դեմքն է, ուստի դրա պահպանումն անհրաժեշտ է և կարևոր:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Рудов Л., Балин М.,** «Размышления о школьной форме», Осень / 2008.
2. **Щербак А.А., Богданова А.О**., «Школьная форма в современномобществе», Некрасовский педагогический колледж No 1, Санкт-Петербург, 2019.
3. **Луцева И.Ю.** «Влияние школьной формы на становление личностныхкачеств ученика», Таганрогский институт имени А.П. Чехова, 2018.
4. https://bigenc.ru/sociology/text/1823949
5. https://emupauto.ru/hy/kto-pridumal-shkolnuyu-formu-proishozhdenie-shkoly-i-istoriya.html

ՀԱՎԵԼՎԱԾ 1.

Հարցաթերթ

1. Բավարարում է Ձեզ հագուստը, որը կրում են աշակերտները։

a. Լիովին բավարարում է

b. Մասամբ բավարարում է

c. Ընդհանրապես չի բավարարում

2. Կցանկանա՞ք տեսնել աշակերտական համազգեստ դպրոցներում

a. Այո, կցանկանայի

b. Ոչ, չեմ ցանկանա

3. Հակիրճ կհիմնավորեք ինչու կցանկանայիք/չէիք ցանկանա։

_____

_____

4. Ինչպիսի՞ն պետք է լինի ժամանակակից աշակերտական համազգեստը։

a. Հարմարավետ

b. Ժամանակակից

c. Գործնական

d. Այլ

5. Համաձա՞յն եք հետևյալ պնդման հետ. Աշակերտական համազգեստըապահովում է կարգապահություն աշակերտների շրջանում

a. Համաձայն եմ

b. Համաձայն չեմ

6. Ըստ Ձեզ աշակերտական համազգեստը աշակերտներին դարձնում է միօրինակ։

a. Համաձայն եմ

b. Համաձայն չեմ

7. Կառանձնացնեք արդի դպրոցական համակարգում աշակերտականհամազգեստի բացակայության թերություններ և առավելություններ

a. Թերություններ

_____

_____

b. Առավելություններ

_____

_____

8. Դուք՝

a. Ուսուցիչ եմ

b. Աշակերտ եմ

9. Սեռը՝

a. Իգական

b. Արական

10. Ձեր տարիքը՝ ___